Միսաք Մեծարենց

Խոնջ իրիկունն արագորեն

Խոնջ իրիկունն արագորեն կը խոնարհի դեպի խավար
բուրմունքներու հաշիշն հոգվույս մեջ կը ցանե հեշտանք մը թույլ,
երգի խազեր կը կրքոտին տակավ տենդոտ հուզումնավար:

Անօրինակ մըրափի մը մեջ կիսազգած կը թափառիմ,
ցնցված ձայնեն ճոկաններուն՝ որոնք կուլան դուրսը անդուլ.
պատուհանեն կը խրկե ինձ հովիկն համբույրն իր մտերիմ:

Մութ սենյակիս մեջ կը շրջիմ առջի համբույրն անրջելեն,
ու շրթունքներս են բոցավառ՝ ջերմութենեն երազային.
փակ են աչքերս, և կամ հանկարծ մերթ անձկությամբ դուրս կը նային.
ա՜հ, լրռությունն որ կը տևե՜, և ըստվերներն ու կը քալե՜ն…

Շուրջիս անփույթ իրեն համակ հարցումներուս հանդեպ խուլ են,
հանդիսատես կ’ըլլամ մտքիս պատկերներուն քայքայումին
դուն չե՜ս գիտեր թե ի՛նչ կը զգամ գուրգուրանքես երբոր իմին՝
քեզի համար տենդով հյուսած երազանքնե՜րս իսկ կը խլլեն…